ցաւ արտասահմանեան մամուլում և դրանց պատասխանատուութիւնը դաշնակիցներից ամեն մէկը միւսի վրայ էր գցում. Այդ տենդենցիոզ մեղադրանքներին դէմ Բոլգարիան իր կողմից առաջարկեց քննութիւն նշանակել և փաստերը ստուգել տեղնուտեղը՝ յանձնելով քննութեան գործը միջազգային յատուկ մասնաժողովին։ Այդ առաջարկութիւնը բէալ կերպարանք ստացաւ շնորհիւ «միջազգային խաղաղութեան ֆոնդի», որպիսին նուիրաբերել է ամերիկացի յայտնի միլիարդէր Կարնէջին։ Այդ «ֆոնդի» վարչութեան բաժանմունքներից մէկը ստանձնեց իր վրայ «քննիչ մասնաժողովի» կազմակերպութիւնը, որի մէջ մտնում էին դանդան երկիրների հեղինակաւոր հասարակական և պարլամենտական գործիչներ։ Այդ «մասնաժողովի» մէջ Ռուսաստանի կողմից նշանակուեց Բալկանեան գործերին լաւ տեղեակ պ. Ն. Միլիւկովը։ Սերբիան մեղադրելով կամ պատրուակ ընդունելով պ. Միլիւկովի բոլգարասիրութիւնը—մերժեց նրա մասնակցութիւնը այդ գործում, շատ կոպիտ և անվայել, վիրաւորական ձևով արտայայտելով իր բացասական վարմունքը։ «Մասնաժողովը» ևս իր կողմից յայտնեց, որ այդպիսի պայմաններում ինքը հնարաւոր չէ համարում գործը սկսելու. նրա անդամները, դրանց թւում և պ. Միլիւկովը, հեռացան Բելգրադից՝ ենթարկուելով փողոցային չափազանց անվայել ցոյցերի։ Այդտեղից «քննիչ միջազգային մասնաժողովը» ուղևորուեց Սալոնիկ, բայց այնտեղ էլ նոյն բացասական ընդունելութիւնը գտաւ. յոյները—պաշտպանելով իրենց բարեկամ սերբերին—հրաժարուեցան միջազգային քննութիւնից*)։

Կար. Թէմուրազեան

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԶՈՒԱԾ

«Մշակ»-ի նախանցեալ շաբաթուայ համարներից մէկում տպուած էր Անիի վանահայր Միքայէլ վարդապետի նամակը, որ անկարելի է թողնել անուշադիր։

*) „B. E."

Ահա ամիսներ է, ինչ հայ մամուլը,—յանձին «Հորիզոնի» և «Կովկասի Լրաբերի»,—տեղեկութիւններ էին հաղորդել, իբր թէ պրոֆ. Մարրը անբարեհաճ և նոյնիսկ թշնամական վերաբերմունք է ցոյց տալիս դէպի մեր հինաւուրց Անիի աւերակները, մենք ուզում էինք ասել դէպի իր Անիի աւերակները, որ աւելի ճիշտ կը լինէր, որովհետև Անին կենդանացնողը նա է եղել իսկապէս։

Նման չարադիտակ լուրեր մեզ ևս հասել էին, բայց մենք միշտ էլ մերժել էինք տեղ տալ մեր թերթի էջերում նման կանխաբէն սուտ ու անհաւատալի լուրերին։

Ի՞նչպէս. միթէ կարելի էր մի բոլշէ անգամ կարծել, թէ պրոֆ. Մարրը, որ անզուգական գիտնականի հետ միացնում է նաև ազնիւ սրտի բոլոր յատկութիւնները, իրեն թոյլ կը տար մի այդպիսի թշնամական դիրք դէպի Անին։

Միթէ պրոֆ. Մարրի ջանքերից ու երազներից մէկը չէ եղել ստեղծել հինաւուրց Անիում մի ամբողջ թանգարան, որ մեր երկրի նախկին քաղաքակրթութեան կոթող լինելու հետ, պիտի լինէր մի կենդանի կոթող հէնց իր՝ այդ յարգելի գիտնականի անմոռաց կոթողը։

Այդ ամբողջ աղմուկը մի բան է միայն ապացուցում, այն է՝ թէ որքան անփոյթ է եղել էջմիածինը դէպի Անին, դէպի մեր վանքական-եկեղեցական-կրօնական իրաւունքները։

Այս ամբողջ աղմուկը մի բան է միայն ասում, այն է՝ Մայր Աթոռը օր առաջ պէտք է վերականգնի մեր անվիճելի եկեղեցական-կրօնական-վանքական իրաւունքները Անիի վերաբերմամբ։

Իսկ պրոֆ. Մարրին, որի անունն ու գործերը հայ հնագիտական պատմութեան լաւագոյն էջերի զարդն է լինելու, մենք նորից մեր երախտագիտական զգացմունքներն ենք արտայայտում։

Պատմաբան

ՄԱՄՈՒԼ

«ՄՇԱԿ»

Կան խնդիրներ, որոնց մասին անկարելի է վիճել, աւելորդ է վիճել—այնքան նա պարզ է, ակներև։

Այդօրինակ խնդիրներից է և այն, որ *համազգային տօնը* մենք չտօնեցինք հարկաւոր միահամուռ ոգևորութեամբ, և մանաւանդ *չյաւերժացրինք* ըստ արժանւոյն, թէև գեղեցիկ միտք էինք յղացել յաւերժացման համար—ստեղծել *համազգային դպրոցական ֆոնդ*։

Կասկած չկայ, որ ամենքս էլ աւելի էինք սպասում, և իսկապէս աւելի էլ պիտի լինէր համազգային, համա-

ռուսական հայերի ժողովարարութեան արդիւնքը։

Բայց «Մշակը» համաձայն չէ մեզ հետ, նա գտնում է, թէ մենք կարող ենք միանգամայն գոհ լինել ստացուած գումարից, որ ժողովուած է մի պատկառելի դրամագլուխ։

Մենք ասում ենք և նորից պնդում ենք, թէ ժողովուած է մի չնչին, չատ չնչին գումար համազգային մի նման ֆոնդի համար, համազգային մի նման յօբելեանի առթիւ։

Պնդում ենք նոյնը և այսօր։ Չէք ուզում հաւատալ, թող թուերը խօսեն, հէնց «Մշակի» առաջ բերած թուերը։

Նա ասում է՝ ժողովուել է 477 հազար, կը ժողովուի էլի մի 30 հազար, ընդամենը՝ կէս միլիոն։ Շատ բարի։

Բայց այդ գումարից պիտի դուրս գալ Կարապետ Լալայեանի (Բագուեցի) և Սարգիս Խրճեանի (Ն.-Նախիջևանցի) *կտակած* գումարները, որոնք կապ չունեն *համազգային տօնի* 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեանի հետ և միայն պատահական գումարներ են՝ *մահուան* չնորհիւ դրուած Էջմիածնի տպամատրութեան ներքոյ։

Մնում է մի չատ համեստ գումար, որից մի ամբողջ հարիւր հազարը տուել է մի հաստատութիւն—Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը։

Ուրեմն *ժողովուած* է հազիւ երկու հարիւր հազար, որ Պետերբուրգի եկեղ. խորհրդի տուածի հետ տանում է մօտ *երեք* հարիւր հազար։

Սա մի ողորմելի գումար է նման պարագաներում։

Երբ ասում ենք *համազգային տօն, յօբելեան*,—այդ խօսքի տակ պէտք է հասկանանք այն եռանդի գումարը, որ թափել են այդ առթիւ, և ոչ մի կերպ չի կարելի Վ.Հ. Հայրապետի տրամադրութեան տակ պանդան առթիւ դրուած գումարները տօնական ջանքերի արդիւնք համարել։ Ուրիշ բան է, թէ մենք կարող ենք կողմնակի գումարներով մեծացնել դպրոցական ֆոնդը, և ուրիշ բան՝ թէ ինչ է *ժողովուել* ուղղակի դպրոցական ֆոնդի համար, յատկապէս տառերի գիւտի և տպագրական խօսքի յօբելեանի առթիւ։

Մենք ոչ միայն կողմնակից ենք, որ Վ.Հ. Կաթողիկոսը Լալայեանի և Խրճեանի իր տրամադրութեանը թողած հարիւր հազարները դպրոցական ֆոնդին յատկացնի, այլև կողմնակից, որ մինչև յօբելեանն իսկ Վ.Հ. Հայրապետի բարեհայեցողութեան թողած բոլոր գումարները նոյնպէս վերածուին դպրոցական ֆոնդի և կողմնակի իսկ գումարներ, որոնք *կտակով* որոշ տնօրինութիւն չունին, մեր պաշտպանած ֆոնդի մասը դառնան։

Բայց խնդիրը այդ մասին չէ, այլ այն, որ համազգային յօբելեանի առթիւ *ժողովուել է* մի չատ ողորմելի գումար։ և «Մշակը» ժխտում է, բացատրում է այդ։

Առաջ բերենք փաստեր.—

Թիֆլիզը տուել է միայն 12 հազար։

Բագուն 50 հազար։

Ղարաբաղի Երևանի, Շամախու և Աստրախանի թեմերում, ըստ «Մշակի», ժողովուելու են 30 հազար։

Այսպէս ուրեմն *ամբողջ* Կովկասում և Աստրախանի թեմում չի ժողովուել գոնէ *մի* հարիւր հազար։

Ահա այս է իսկապէս կովկասահայութեան *ժողովուած* գումարը, ժողովրդական լուման։

Պնդել թէ այս մի ողորմելի գումար չէ՝ դժուար է։

Բայց ընդունենք անգամ, թէ Լալայեանի կտակած գումարը յատկապէս համազգային տօնի առթիւ է եղած—ուրեմն երկու հարիւր հազար ռուբլի ամբողջ Կովկասում ու Աստրախանի թեմում։

Դարձեալ գումարը մնում է ողորմելի, մանաւանդ որ մի Ռոստով Նոր-Նախիջևան փոքրիկ հայկական գաղութը տալիս է ճիշտ նոյնքան *ժողովուած* ու *կտակուած* գումար, ոչքան մօտ մի միլիոն վեց հարիւր հազարից աւելի հայութիւնը...

Բայց աւելի առաջ գնանք. ընդունենք անգամ, թէ «Մշակի» հաշուած կէս միլիոնը—կտակուած հարիւր հազարների հետ—ամբողջովին ժողովուել է յատկապէս յօբելեանի առթիւ, տօնական աշխատանքի չնորհիւ։ Սակայն միթէ դա մի մեծ դրական արդիւնք է, որ առիթ տար մեզ պարծենալու։

Չէ՞ որ մի թեմական դպրոցի յօբելեան, մի Շուշուայ սեմինարիայի 75-ամեակը գրեթէ նոյնպիսի մի գումար է *ժողովել*։

Ապա ուրեմն...

Կրկնում ենք, կան բաներ, որոնց մասին չեն վիճում, այլ զգում են։ Այսպիսի հարցերից է *դպրոցական ֆոնդի* անյաջողութեան խնդիրը։

Մենք մէկն ենք եղել դպրոցական ֆոնդի ջերմ պաշտպաններից և եթէ մենք արձանագրում ենք այս տխուր փաստը, այդ միայն նրա համար, որ ցաւալի էր մեզ համար *մի ամբողջ տարուայ համազգային ջանքերից յետոյ* հասնել մի նման արդիւնքի։

Եթէ «Մշակը» այս թուական հաշուետուութիւնից էլ չհամոզուեց, և կարծում է թէ մենք չափազանցացնում ենք, խառնում գոյները, բռնազբօսիկ դասաւորում թուերը, ապա թող հարցնէ իր աշխատակից յարգելի Գր. Զալխուշեանին, կամ աւելի ճիշտ՝ թերթէ հէնց «Մշակի» էջերից Զալխուշեանի գրած ջերմ նախատինքները ուղղած կովկասահայերին, որ նոյնիսկ Բագուում և Թիֆլիզում չգտնուեց գոնէ *մի* հատիկ հայ, որ իր անունը կապէր դպրոցական ֆոնդի հետ, համազգային յօբելեանի հետ։

Խոստովանենք փաստը, անուրանալի ճշմարտութիւնը։

Բայց այդ չի նշանակում, թէ մենք փորձում ենք նսեմացնել դպրոցական ֆոնդի նշանակութիւնը. ոչ, քաւ լիցի։

Զվակելով մեր աչքերը իրականութեան հանդէպ մենք պէտք է աշխատենք—ինչպէս փորձում ենք ցոյց տալ գպրոցական ֆոնդին նուիրուած մեր առաջնորդողներում—ստեղծել մի այնպիսի հաստատութիւն—*դպրոցական ֆոնդ* կամ *սնդուկ* – որ աճի, զարգանայ, հաւատ ներշնչի։

Գործի սկիզբը դրուած է. ստեղծագործական ոգին պիտի լրացնէ նիւթական միջոցների պակասը։

ԲԱԳՈՒԻ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Տարւոյս սեպտեմբերին այս վերնագրով մի յօդուած էի գրել «Հովիտի» 36 №-ում։

Յօդուածիս մէջ ցոյց էի տուել այն միքանի պակասութիւնները, որոնք ճարտարապետի զանցառութեան արդիւնք էին։

Այդ պակասութիւններն այժմ հետզհետէ լրացնւում են, հարկաւոր նորանոր ծախքի տակ ձգելով եկեղեցին։

Բայց հիմա երևան է գալիս մի այլ պակասութիւն, որ առնուազն 15,000 ռուբլի նոր ծախք է պահանջում։

Ահա թէ ինչումն է բանը։

Սեպտեմբերի վերջերին երկու օր եկած յորդ անձրևից եկեղեցին սկսեց փառաւորապէս կաթել։

Ժողոված 4 ճարտարապետները գտել են, որ՝ 1) կտուրի քարերն լաւ տեսակից չեն և 2) դարսուածքը այն ձևով է կատարուած, որ կաթոցը անխուսափելի է, եթէ նոյնիսկ քարերը լաւ տեսակից լինէին։

Շինող վարպետ Ֆրանդին՝ իրեն ուղղուած պաշտօնական հարցին պաշտօնապէս պատասխանել է, որ ինքը *գործել է ըստ ամենայնի ճարտարապետ Քաջազնունու ծրագրով ու ցուցումով*։

Իսկ Քաջազնունի ճարտարապետը, ինչպէս առաջին յօդուածումս էլ գրել էի, ի վաղուց հետէ իր չնորհքը պակասացրել է Բագուից՝ ամբողջապէս ստացած լինելով հանգուցեալ Թօլուխանեանի կողմից իրեն յատկացրած 24,000 ռուբլի կլորիկ գումարը։

Կեցցէ՛ հայկական թայֆայականութիւնը մէկ կողմից։ Կեցցէ՛ և հայկական հասարակական անտարբերութիւնը միւս կողմից։

Ճարտարապետների ժողովը որոշել է առաջիկայ մայիսին եկեղեցու կտուրը քակել և նոր կտուր չինել։ Թէ ինչ նիւթից և ինչ ձևով—ժողովը դեռ վերջնական եզրակացութեան չանգած չէ։

Նղիշէ ա. ք. Գեղամեանց

ԲԻԹԻՇԿ-ԲԱՀԱՆԱՑ

Թիֆլիզի «Знакъ Тифлиса» փոքրիկ լրագրում վերջերս աչքի է ընկնում մի փոքրիկ յայտարարութիւն, որով յայտնւում է, թէ докторъ—священникъ Լեժաւան ընդունում է հիւանդներին որոշեալ ժամին, ի բաց առեալ տօնի նախընթաց երեկոներին նայլն։

Այդ ուշագրաւ ազդը չի կարելի կարդալ սովորականի պէս և մի կողմ դնել լրագիրը, որովհետև այդ երկու իրար մօտ շաղկապուած բառերի մէջ ահագին միտք կայ—անշուշտ ուժասպառ մարդկութեան իդէալական օգնութեան տեսակէտից։

Ես երբ առաջին անգամ կարդացի այդ յայտարարութիւնը, չէի հաւատում, որ դա իսկական մի յայտարարութիւն է և տպագրական սխալ համարեցի, սակայն յետագայ նման յայտարարութիւններն ապացուցեցին, որ դա ոչ միայն սխալ չէ, այլ ճշմարտութիւն. ուրեմն կայ Թիֆլիզում մի քահանայ, որ իր՝ այդ պատուաւոր հոգևոր բժշկութեան պատասխանատու կոչման հետ, միացրել է և մարմնաւոր բժշկութեան միանգամայն վեհ և սրտացաւ կոչումը։

Փառք և պատիւ մի այդտեսակ քահանային։

Բայց ափսոս, որ մի այդտեսակ գաղափարական գործիչը նստած է մայրաքաղաքում, ուր բիւրաւոր բժիշկներ կան, ուր բիւրաւոր հիւանդներն էլ ամեն յարմարութիւն ունեն չուտափոյթ օգնութիւն ստանալու։

Բայց և այնպէս Թիֆլիզում անգամ հիմք դրած այդ նորութիւնը, այդ իդէալականութիւնը ինձ այնքան է մխիթարում և ոգևորում, որ իմ սրբազան պարտքն եմ համարում յարմար առիթին գնալ այցի, մի այդտեսակ քահանայի, որ անշուշտ դիպլոմը ձեռքին, ժողովրդեան հոգևոր և մարմնաւոր վերածնութեան դեկը ձեռքին, նետուել է կեանքի ալեծուփ ովկիանը, անշուշտ լաւագոյն տենչերի և գաղափարների ներշնչման ազդեցութեան տակ։

Ով ինչ ասի, ով ինչ ուզում է ենթադրի, բայց ես մի այդտեսակ քահանայի վաղուց, շատ վաղուց ցանկանում էի իրականութեան մէջ տեսնել. և որքան բաղդաւոր կը լինի մոռացուած գաւառը, ուր բժիշկների կատարեալ սով է, եթէ մի օր մի շարք այդտեսակ լուրջ քահանայ-բժիշկները մուտք գործէին մեր մէջ—գաւառիս գիւղական ազգաբնակութեան շրջանում, ուր ծով կարիք կայ մի այդտեսակ փրկարար նորութեան, մի այդտեսակ հումանիստ գործելակերպի։

Ասել գաւառ, գիւղացիութիւն—հեշտ է, բայց ապրել նրա մէջ, նրա դառնաչունչ հեծեծանքների մթնոլորտում և մանաւանդ յաճախակի էլ չփուել նրա հեռաւոր ու մերձաւոր միջավայրերում, հեշտ չէ ինտելիգենտ և սրտացաւ մարդու թէ գործչի համար։ Այո՛, հեշտ չէ գաւառի, գիւղական բնակչութեան վհատութեան հովտում, այդ ոչ ծաղկաւէտ ճանապարհով անտարբեր անցնելը։